

ԿՐՕՆԸ ԿԱՆ-ԲԱՐՈՅՐԱԿԱՆ

ԶԱՏԿԱԿԱՆ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆԸ:

Այլ այդ, Քրիստոս յարուցեալ է ի մե-
ռելոց՝ առաջին պտուղ ննջեցելոր:

1 Կոր. ԺԵ. 20.

Յանցաւոր աշխարհը հաղարաւոր տարիներ սպասում էր, մինչև վեջապէս, տանջուածի և յուսահատուածի հա-
մար ծագեցնոր կեանք կենսաբեր գերեզմանից: «Մեռել-
ների միջից յարութիւն առած Քրիստոսը այլ ևս չի մեռ-
նում, մահը նրան այլևս չի տիրում», ասում է Պօղոս Առաքեալը: Կատարուեցաւ հրաշագործութիւններից ամե-
նագերազանցը. Ինքն Աստուած Իւր արդար դատաստանն արաւ աշխարհային անարդարութեան վրա, նա Ինքը յա-
րութիւն տուեց Իր սիրելի Որդուն «լուծեալ գերկուռս մահու. քանզի ոչ էր հնար ըմբռնել նմա ի նմանէ»:

Գիշերային լուութեան մէջ ծնունդ առաւ մինչ այդ աշխարհին անյայտ աստուածային վարդապետութիւնը, որ սկզբում մութ և անհաւատալի էր, բայց շուտով պար-
զուեց առաքեալների կրօնական գիտակցութեան համար և յատկապէս պենտեկոստէին երևեցաւ նորանց իրակա-
նունեան լուսով: Թերահաւատութիւնից կուռ հաւատքի վե-
րափոխուածները, վշտահարութիւնից յետոյ հրճուողները, երկչոտութիւնից անվեհեր դարձածները պայծառացած ս. Հոգւով տարածուեցին երկրի վրա Քրիստոսի ս. Յա-
րութեան ուրախական աւետիքը տանելով. «Այլ այդ՝ Քրիստոս յարուցեալ է ի մեռելոց՝ առաջին պտուղ ննջե-
ցելոց. քանզի մարդով եղև մահ, և մարդով յարութիւն մեռելոց: Եւ մաղում էր այն իբրև ամարային անձրև ծարաւի երկրի վրա, յոգնած սրտերի վրա. կանաչաբոյր օաղիանների նման ամեն տեղ կանգնում էին եկեղեցիներ, որոնք ամրանում էին հաւատքով և օր օրի վրա աճում էին ու բազմանում Քրիստոսի քարոզիչները:

Ի՞նչ վեհ, ի՞նչ հանգիստաւոր և մեծ, ի՞նչ հրաշափառ էր «կարմիր զատիկը» այդ հեռաւոր անցեալի մէջ, որի մասին այդքան ոգևորուած և ուժեղ աւետում են աշխարհին նոր կտակարանի գրուածքները։ Ո՞րպիսի խնկաբոյր անուշութեամբ է ներկայանում այս հին հաւատքը համեմատած ներկայիս թերահաւատութեան կամ մեր օրերի անհաւատութեան հետ։ Ո՞ւր է նրա մանկական մաքրութիւնը, ո՞ւր է նրա հմայքը, ո՞ւր աշխարհայազիւ ուժը... Ինչպէս որ գերեզմանին մօտեցող ծերունին յիշում է իւր անդարձ երիտասարդութիւնը, նոյնպէս և ժամանակակից քրիստոնեայ մարդկութիւնը, մտահոգ ներկայի մասին, ակամայից մտաբերում է իր կեանքի դարնան օրերը, երբ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» դաւանանքը ծառայում էր որպէս հիմնաքար նորա բարոյական շէնքի։ «Բայց Յիսուս Քրիստոս երէկ և այսօր, նոյն և յաւիտեան»։ Եթէ յաւիտեանական է Քրիստոս և նրա վարդապետութիւնը, ապա ուրեմն մեր ոգևորութեան սառչելու պատճառը մեր մէջ է թաղնուած։

Ինչպէս որ գիշերային լուսութեան մէջ ծնունդ առաւ Աշխարհի Փրկիչը, նոյնպէս և գիշերային խաւարը պատռելով յարութիւն առաւ Նա, խորհրդաւորապէս հաստատելով չարի դէմ տարած յաղթանակը

Եւ այստեղ է Մեծ Տօնի ամենաբարձր իմաստը։

Մեզանից շատերը կորցրել են մանկական օրերի հաւատը, գուցէ և երբէք չեն ունեցել։ Բայց չկայ մի մարդ, որ առանձնանալով իր խղճի հետ, գիտակցութեան պայծառ ըսպէսներին իր սրտում չափ. «Հաւատում եմ, որ չարը պիտի յաղթուի, պէտք է միայն զգաստ լինել»։

Եւ եթէ այդպիսի մարդը, առանց կեղծ ամօթի, առանց նախապաշարմունքների մտածի, թէ հայ ժողովուրդը ինչպիսի խոհեր է ամբարում այս տօնի օրը, ինչպէս նրա վշտահար սիրտը այրում է վերջին հրաշքին հաւատալով, նա կըմբռնի, որ այս Մեծ Տօնը օտար չէ և նրան, որովհետեւ նա ժողովրդի հետ միասին ակնկալելու է չա-

րի յաղթահարուիլը, եւ այս հրաշքին հաւատալը զգաստութեան մշտական աղբիւրն է լինելու:

Ընդհանուր քրիստոնէական այս տօնը, առանձնապէս խնկելի է հայերիս համար: Հայր առանձին հոգածութեամբ պահել է այն բոլոր արհաւիրքների ժամանակ, իւր ամբողջ պատմութեան ընթացքում. պահպանել է նրա ամբողջ վայելչութիւնը իւր կեանքի խաւար, ծանր օրերում: Ոչ ճգնաւորութիւնը, ոչ բուդայական անտարբերութիւնն դէպի աշխարհը կաղմում է հայ ժողովրդի կրօնական վեհութիւնը: Նրա կրօնական ձգտումների ամենաբաձր կէտը—Յարութեան տօնն է, ձգտումն ապրելու և տեսնելու մարդկանց և երկրի բարեփոխութիւնը:

Այստեղ մեր ինտիլիգենցեան պէտք է տսանի ժողովրդից— եթէ նա իւր անյաղթելի վշտի մէջ, հոգեպէս և ֆիզիքապէս աղքատ լինելով, չի կորցնում իր զգաստութիւնն ու հաւատը, ապա ևս առաւել խելահասները պարտական են անշուշտ գնալ նախագծած ճանապարհով և միշտ զգաստ լինել:

Թերևս այժմ աւելի քան երբ և իցէ դէպի զգաստութիւն կոչը հնչում է օտարօտի և խորթ, սրովհետեւ ինչպէս Ս. Գիրքն է ասում, «անօրէնութիւնների շատանալով ցամաքում է մարդկանց սէրը»: Կարծես սէրը իսպառ ցամաքել է մեր ժամանակներում:

Բայց չլինենք փոքրոգի և թերահաւատ: Թող այս հրաշափառ յաղթական Տօնը, որ չարի վրա տարած յաղթութեան տօնն է, լինի մեր ուղեցոյց աստղը. առաջնորդի մեզ, որպէս զի մենք միշտ զգաստ, միշտ հաւատով գիմենք դէպի մեծ հրաշքի իրականացում—դէպի յաղթութիւնը Չարի վրա:

